

Լեզվառճային շերտավորումները Սրբուհի Տյուսարի  
«Մայտա» և «Արաքսիա կամ Վարժուհի» վեպերում<sup>1</sup>

Նաիրա Համբարձումյան  
Միրանուշ Փարսադանյան

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-8>

*Հանգուցային բառեր. Սրբուհի Տյուսար, Միայիլ, կանացի դիսկուրս, տրոպ, ինտերտեքստ, էլիպսիս, օքսիմորոն*

**Նախաբան**

Ուշագրավ են սոցիալական գործոններն ու գործընթացները ուսումնասիրող բոլոր այն գիտությունները, որոնք դիտարկում են կին-տղամարդ փոխհարաբերությունները և սեռով պայմանավորված վարքագծերը: Այս առումով, հետազոտողների տեսադաշտում են հասարակության մեջ կանանց և տղամարդկանց անձնական որակների շուրջ հասարակության տարբեր անդամների ցուցաբերած կարծրատիպային պատկերացումները: Նմանօրինակ հարցերի ուսումնասիրությունը հումանիտար գիտություններում իրականացվում է հաշվի առնելով ոչ թե անձի կենսաբանական, այլ սոցիալական կյանքի և մշակույթի հետ փոխառնչությունների չափանիշները: Այս հանգամանքը գիտության մեջ ձևավորում է *կին-տղամարդ փոխհարաբերությունների տիրույթը*, որն իր արտահայտությունն է գտնում հումանիտար որոշ գիտություններում՝ լեզվաբանություն, գրականագիտություն, փիլիսոփայություն, մարդաբանություն, մշակութաբանություն, սոցիոլոգիա, հերմենևտիկա ևն: Ընդհանրապես, հասարակական գիտություններում գործածվելով՝ սեռը մեծապես արտացոլում է ոչ միայն անձի *սեռային*, այլև *սոցիալ-մշակութային* հատկանիշները: Սեռը սոցիալական (համակարգ) է, որը ամփոփում է *վարքագծի և սոցիալական ռազմավարությունների առանձնահատկությունները*: Հասարակության մեջ այն մարդու *սոցիալականացմանը* համապատասխանող արդյունք է, քանի որ ընկալվում է որպես *պայմանական սուբյեկտ*, որը հատկանշում է իր հիմնական տարբերությունը *կենսաբանական կարգ* ընկալվող սեռից (գենդերից)<sup>2</sup>: Հետևաբար, կին-տղամարդ փոխհարաբե-

<sup>1</sup> Ուսումնասիրությունը իրականացվել է ՀՀ Գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային «Կանանց հիմնախնդիրները 19-րդ դարի երկրորդ կեսի արևմտահայ գրականության մեջ» թեմատիկ ծրագրի շրջանակներում: Ծածկագիր՝ 2IT-6B118:

<sup>2</sup> Այս համատեքստում *գենդեր* հասկացությունը ներառում է փոխհարաբերությունների և փոխազդեցությունների ոչ միանշանակ կարգեր, որոնց միջոցով իրացվում է սոցիալական փոխհարաբերությունների հիմնարար բաղադրիչը:

րությունների սոցիալական բնույթը հասարակության զարգացման գործոններից մեկն է: Կարևոր է ընդգծել, որ հասարակության աշխարհ-պատկերը ներկայացնում է սեռային վարքագիծը, չափանիշներն ու կարծրատիպերը, ավանդույթները, օրենքը և բարոյականությունը: Երկու սեռերի տարբերակումը լեզվի գործնականության տիրույթում տարաբնու է, քանի որ ուսումնասիրվում են ոչ միայն ընդհանուր լեզվաբանական, այլև սոցիալ-լեզվաբանական, հոգելեզվաբանական, նյարդալեզվաբանական, լեզվամշակութաբանական հիմնախնդիրները: Մեռի կամ սեռերի երկխոսության և լեզվական դրսևորումների տեսանկյուններից Սրբուհի Տյուսաբի «Մայտա» և «Արաքսիա կամ վարժուհի» վեպերը պահանջում են լուրջ ուսումնասիրություն: Տյուսաբի արձակում լեզվաոճային շերտավորումները երկու սեռերի տարբերակումների գիտակցումն է գրական տեքստում՝ որոշակի գրավոր միջոցներով: Ընդհանրապես, մարդու խոսքային վարքագծի տարբերությունները որոշվում են սեռային գործոնով և դրսևորվում լեզվում:

### **Լեզվաոճային շերտավորումները որպես գրի տեխնիկա**

Գրական տեքստը համարժեք է կյանքի որոշակի իրավիճակների նույնականացմանը և դրանց իրականացմանը (խոսքի իրագործմանը), քանի որ յուրաքանչյուր գրական տեքստի հիմքում ոչ միայն իրականության մասին դատողությունն է, այլև հաղորդակցական որոշակի նպատակադրումը, որը որոշվում է փոխհաղորդակցության միջոցով և այն խնդիրներով, որոնք հեղինակը դնում է իր առջև: Հաղորդակցական որոշակի մտադրության շրջանակներում առաջադրված թեմայի գեղագիտական խնդիրները լուծելու նպատակին Տյուսաբը ծառայեցնում է ոչ միայն հաղորդակցության առարկան, այլև լեզվի միջոցով իրականացվող տեխնիկայի որոշ գործիքներ: Գեղարվեստական երկի էությունը գեղագիտական է իր բնույթով, ուստի և՛ արտահայտվում է հեղինակի գնահատականի միջոցով, ընդհանրապես:

Աշխարհի ներկայացումը և մարդու ներկայությունը գեղարվեստի տիրույթում, հատկապես գեղարվեստական գրականության մեջ, իրականացվում է գեղագիտական հղումների միջոցով: Այս առումով, գրականությունը մշակութային որոշակի տիրույթ է, որում Սրբուհի Տյուսաբը հնարավորություն է ստանում՝ բացահայտելու կնոջ ներաշխարհը՝ դրանով արտահայտելով սեփական վերաբերմունքը կյանքին:

Սրբուհի Տյուսաբի «Մայտա» [9] և «Արաքսիա կամ Վարժուհի» [10] արձակ երկերի գեղագիտությունը, նախ և առաջ, աշխարհի հին և նոր երկսեռ պատկերի բովանդակությունն է, որում էական նշանակություն և դերակատարություն ունի կանանց և տղամարդկանց կերպարների միաբնեռությունը, որը ընկած է երկու սեռերի միջև սիրային փոխհարաբերությունների, ընտանեկան կյանքի, աշխատանքի, զբաղմունքների և այլ հանգամանքների ներքին տիրույթներում: Այս համատեքստում կարևոր են կին-տղամարդ հիմնա-

խնդիրների գեղարվեստական պատկերավորման երկու կողմերը՝ ա. կին հեղինակների կողմից *կնոջ ներաշխարհի սեռային առաջնայնության ապահովումը*, *կնոջ հոգեբանության* պատկերումը, ընդգծումը և դրա իրացումը *գլխավոր կերպարի զգայական ռոբոտի գեղագիտության* և *վարքագծի առանձնահատկությունների* գերակշռության միջոցով, բ. տղամարդ կերպարների պատկերումը, նրանց *հոգեկան աշխարհը* և *վարքագիծը*՝ կնոջ ընկալման տեսանկյունից:

Կին-տղամարդ ռազմավարությունների վերլուծության համար արդիական է կանանց արձակի՝ վեպերի, պատմվածքների, էսսեների լեզուն ուսումնասիրելը, որոնցում, լեզվական գործոններով պայմանավորված, տարբեր մակարդակներում գոյություն ունեն հաղորդակցական տարբերություններ: Արևմտահայ լեզվական մշակույթում կարևոր են դրանց դրսևորման առանձնահատկությունները, սեռից կախված լեզվական միավորների քերականական, բառային և ռճական տարբերակների նպատակադրված ընտրության ուսումնասիրությունները, որոնցում սեռը հասկացվում է որպես մշակույթի և սոցիալական հարաբերությունների արդյունք, որը իրականացվում է լեզվի միջոցով: Սրբուհի Տյուսաբի արձակի լեզվական հատկանիշների վերլուծությունից պարզում ենք, որ սեռով պայմանավորված ֆեմինիզմի դրսևորումները լեզվում անուղղակիորեն արդիացնում են դրանց գործնականությունը և իմաստը, թեպետ՝ միայն կանացի տրամաբանությունը բացահայտորեն ընդգծող կառույցներում հեղինակները կիրառել են տարբեր գործիքներ՝ *համեմատություն, փոխաբերություն, մակդիր, մետաֆոր, առօրյա-խոսակցական բառապաշար, ինտերտեքստ, մետատեքստ* ևն:

Շարահյուսական մակարդակում Տյուսաբի վեպերի լեզվաքերականական դասավորության բարդ եղանակների ընտրությունը պայմանավորված է կերպարների ներքին մտավոր հնարավորությունների, նրբությունների մանրամասն փոխանցման ցանկությամբ, մտքերի իրական տեղաշարժերով, տարաբևեռությամբ և բարդությամբ, ինչը **մտքի լեզվից** անցում է **բառերի լեզվին**: Սրբուհի Տյուսաբի վեպերը առանձնանում են անմիջականությամբ, զգայականությամբ և միամիտ բանականությամբ և խարդավանքներով: Ոչ միայն կին-կին, այլև կին-տղամարդ երկխոսություններում ակտիվորեն գործածվում են *հնարքներ*, որոնք արտահայտում են՝

ա. հաղորդվող նյութի (տեքստի) տրամաբանական իրական գնահատականը, ճշմարտացիությունը և անվերապահությունը՝ **անկասկած, իհարկե, ակնհայտորեն** ևն բառերի միջոցով,

բ. հաղորդվող նյութի (տեքստի) հավանականությունը, հնարավոր գոյությունը, ենթադրությունը կամ կասկածը դրա հավաստիության առիթով՝

**գուցե, հավանաբար, հնարավոր է, ըստ երևույթին, ակնհայտորեն, կարծես թե, թվում է, իմ կարծիքով նև:**

Հմմտ՝ «**Գուցե**, ըսաւ արտամտեալ կինր, ձեզ նման անձանց համար վարձկանի վիճակը հրապոյր մ'ունենայ, իսկ իմ մասիս կը խոստովանիմ, որ մեծութեանց և ճիշտութեանց մէջ ապրելու վարժ անձինք պարզապէս կարեկցութիւն կրնան զգալ, և պատառ մի հաց հայթայթել անոնց՝ որպէս զի անոթութենէ չի մեռնին» [10, 60], «Ըսէ՛, գիտե՛ս ինչ կամիս, **կարծես թե** գիտես, բայց որքա՛ն կը սխալիս, կը դիմես միշտ դէպի անկարելին, երբ նպատակիդ հասնիս աչքերդ կը դարձնես անտարբերութեամբ, և նորանոր իղձերով կը համակուիս, որք արժէք մ'ունին քեզ համար ցորչափ անգործադրելի են և հեռաւորութեան մէջ կը տեսնես զանոնք, զի ի մօտուստ իրենց հսկայաձէւ չափերը կը կորսնցնեն» [9, 23-24]:

**Բայերի, մակբայների, կապերի և շաղկապների** [1] տարածվածությունը կանանց խոսքում ընդհանրապես բացատրելի է նրանց խոսքի անվստահությունամբ, անորոշությամբ և անվճռակաճությամբ: Տյուսաբի վեպերում հաճախ գործածվում են նաև հեղինակի վերաբերմունքը արտահայտող բառեր և արտահայտություններ, հղումներ սեփական կամ որևէ այլ կարծիքի: Դրանք արտահայտություններ են, որոնց միջոցով Տյուսաբը գոյություն ունեցող որոշակի փաստերի հանդեպ արտահայտում է իր հուզականությունը կամ վերաբերմունքը: Դրանց միջոցով են բացահայտվում «Մայտա» և «Արաքսիա կամ Վարժուհի» վեպերի ներքին իմաստային փոխհարաբերությունները, որոնք ընդգծվում են, մասնավորապես, ներկայացման կարգը, ձևը և պատճառը, համադասությունը մատնանշող կապերով, շաղկապներով և մակբայներով՝ **ուստի, վերջապես, ընդհակառակը, սակայն, և, բայց, որ, այսպես, հետևաբար, եթե, մինչև, մինչև որ, որովհետև** նև:

Հմմտ՝ «**Ուստի**, օրուան մնացորդ մասն անցաւ ծառոց ներքեւ հանգչելով, աստ և անդ շրջելով, խոսելով, երգելով, **մինչև որ** հասաւ վերջապէս ժամն վերադարձի պատրաստութիւններն ընելու համար» [10, 65], «**Բայց**, բարեկամուհի՛ դ իմ, փառք քու խրատուցոյ, դատաքննութիւնը պիտի արհամարհեմ, բարոյական ոյժս պատուասիրութեանս **և** կենացս մաքրութեան մէջ պիտի գտնեմ» [9, 32]:

Տյուսաբի արձակի լեզվին բնորոշ են նաև **դարձվածքների և ստորոգյալների** կիրառությունները: Նրա երկերի լեզվի և ոճի գործառականությունը նշյալ վեպերում արտահայտվում է բառապաշարային նորամուծությունների գերակշռությամբ, որոնց համատեքստում, որպես ամենաբարդ և ամենագործառական մաս, առանձնացել ենք *բայը*, որը ունի հսկայական ներուժ, քանի որ հնարավորություն է ընձեռել հեղինակին՝ նկարագրելու կյանքը իր *գարգացման և ընթացքի* մեջ՝ «Իւր արիւնը **կ'եռար**, գլուխը **կ'այրէր**, արժանապատվութիւնը բողոք կը բառնար, կ'ուզէր նոյն պահուն թողուլ զամեն ինչ,

հեռանալ, վերադառնալ ընտանեացը գոգը» [10, 65], «**Դամոկղէսի սուրն** անընդհատ գլխուն վրայ կը շողայ», «Երբ սիրտը կը գործէ, երբ միտքը կ'զբաղի, մին կը ծնանի գգացումն, եւ միւսն իմաստը» [9, 40]:

Բառապաշարի առավել գործուն, կենսունակ և կենսական շերտը «Ժամանակակից հայոց լեզվի» ակադեմիական հրատարակության մեջ, առանց հավելյալ բնութագրումների, անվանվում է **բառային հիմնական ֆոնդ** [4, 220-221]: Ըստ այդմ՝ բառային հիմնական ֆոնդը բառային կազմի կենսականորեն անհրաժեշտ շերտն է, մեր լեզվի բառային կազմի հիմքը, փոփոխության ենթարկվում է դանդաղ [4, 220-221]: Այս բնորոշմամբ նկատի են առնվում նախ՝ լեզվի պատմական զարգացման բոլոր շրջափուլերում գործածվող ընդհանուր հայերեն բառերը, ապա՝ տվյալ շրջափուլում որոշակի փոփոխություններ կրած գործածական բառաշերտը: Այսպես, Սրբուհի Տյուսաբի վեպերում բայահենք բառապաշարի միջոցով հիմնովին արտահայտվում են կնոջ հուզական և հոգեբանական վիճակները, գերակշռում են պարզ և բարդ ածականները, դերանունները, մակբայները, որոնք արտացոլում են կերպարների տրամադրությունը, նրանց հուզական և հոգեբանական վիճակները և ներքին ապրումները: Հմմտ.՝ «Բայց յանկարծ անոնց թշուառ վիճակն աչացն առջեւ ներկայանալով՝ կը տեսներ անոնց զրկումներն, անոնց յուսահատեցուցիչ վիճակը, կը յիշէր մօրն հակառակութիւնն աշխատելու սկզբան դէմ, կը մտածէր, թէ ոյժ պիտի տար այդ հակառակութեան, կը խորհէր ստանձնած փրկարար պաշտոնին վրայ, ու ձեռնթափ կը լինէր, կը մաշէր ընդ մէջ իւր սրտմտութեան և որդիական պարտականութեանց» [10, 65-66], «Գուցէ այս վշտահար տողերս տխուր գաղափար մի ներշնչեն քեզ պարտուցս անկատար և անգոր գործադրութեան մասին, ո՛վ ծանրաբեռնի երբեմն որ եթէ չորդէ մերթ ընդ մերթ՝ կրնայ պայթիլ աստուր և վճռողական թմբիրով» [9, 43]: Ուշագրավ է Ֆ. Խլղաթյանի անդրադարձը հայերենի բառապաշարի գործածական բառաշերտին, որը նա համարում է **բառային կազմ**, առանձնացնում է գործառական ակտիվություն ունեցող բառաշերտը և նույնպես անվանում է **բառային հիմնական ֆոնդ**, որում ներգրավված բառապաշարը, ոլորտային սահմանափակություններ չունենալու պատճառով, համարում է **համագործածական** կամ **չեզոք** [6, 177]:

Կանանց երկխոսություններում փաղաքշական մասնիկների, սիրավիրջերմ արտահայտությունների, դիրքորոշումների և վարքագիծը ներկայացնող արտահայտությունների կիրառությունները ևս բացահայտում են կին հեղինակների վերաբերմունքը այս կամ այն կին կամ տղամարդ կերպարի (ամուսին, ընկեր(ուհի)ներ, հայր, մայր ևն) նկատմամբ՝ խոսքում արտացոլելով համակրանքի, հակակրանքի, անտեսման, հեզմանքի, պարսավանքի և այլ հուզական երանգներ և արտահայտություններ: Տյուսաբի վեպերում դիրքո-

րոշումները, վարքագծային դրսևորումները, դրանց նկատմամբ վերաբերմունքը և կիրառությունները արտահայտված են հստակ, առանց փառաբանական մասնիկների և արտահայտությունների: Չնայած ուղղվածությանը և հակվածությանը ռոմանտիկ բառապաշարին՝ Տյուսաբի երկու վեպերում երկխոսությունները ծավալվում են առավելապես խոհականության, կենսավորձի, իմաստության, բանականության, դատողականության, երբեմն նաև՝ սառը հաշվարկների միջակայքերում: **Հմնտ.**՝ «–Դիտե՛, մա՛յր, ամեն աստիճանի պաշտոններն պատասխանատուութեան մ'ենթարկուած են, նամանաւանդ գործին կարելորութեան աստիճանին կը համապատասխանեն մարդկանց ստանձնած պատասխանատուութիւնը: Թագաւորներէն անգամ համար կը պահանջուի, կ'տեսնես ուրեմն որ ուրեք կայ կատարեալ անկախութիւն դիրքի: // –Ինչ որ օրինաւոր վարձատրութիւն մ'է խղճամիտ աշխատութեան, պարտաւոր է ամեն ժամանակ յայս իմաստուն և լրջամիտ անձանց» [10, 15], «Ահա՛ քեզ ընդարձակ դաշտ գործողութեան, Մայտա՛: Ի տես ընդհանուր թշուառութեանց մոռցի՛ր քուկիներդ, ընդհանուր թշուառութեանց մոռցի՛ր քուկիներդ, ընդհանուր անիրաւութեանց առջեւ մի՛ յիշեր թէ դուն ենթակայ ես անոնց: Խեղդե՛ հեծկլտանքդ ի լուր հեծկլտանաց ընկերութեան: Սիրե՛ արտասուքդ, վե՛ր կանգնէ և քայլե՛» [9, 19]:

#### **Միջտեքստային դրսևորումները որպէս գրի գործիքակազմ: Տրոպ [7]**

Արևմտահայ կին հեղինակների երկերում *միջտեքստայնության* կիրառության լեզվական եղանակները տարաբնույթ են՝ *այլուզիաներ, ցիտատներ, մեջբերումներ, աֆորիզմներ, ոճական հնարքներ*: Այս մոտեցումները վեպերում ունեն որոշակի գործառնություններ՝ իրադարձությունների իրավիճակային նկարագրություններից, կերպարների խոսքի փոխաբերական արտահայտչականություններից մինչև պատմական որևէ իրողության, ակնարկի ոճավորումը, տեքստի հղկումը և այլ հանգամանքներ: Ռուլան Բարտը միջտեքստայնությունը դիտարկում է հետևյալ կերպ՝ «Տեքստի հիմքը կազմում է ոչ թե նրաներքին, փակ կառույցը, որ ենթակա է սպառիչ ուսումնասիրության, այլ նրա դուրս գալը դեպի ուրիշ տեքստեր, ուրիշ կողեր, ուրիշ նշաններ: Տեքստը գոյություն ունի սուկ միջտեքստային հարաբերություններում, ինտերտեքստայնության ուժով» [2, 424]: Գրաքննադատ Շենյա Քալանթարյանը այսօրինակ դրսևորումների բնութագրման համար նույնպես գործածում է *միջտեքստայնություն* եզրույթը՝ դրան զուգադրելով *ինտերտեքստ* հասկացությունը [3, 136]: Տյուսաբի և Միպիլի վեպերում ուշագրավ են նաև *միջտեքստայնության* դրսևորումները, որոնք պահանջում են տեքստային *ներդիրքների* ստեղծում, իրենց ներքին տիրույթում ամփոփում են մեջբերվող այլուզիաներ *ինտերտեքստեր* կամ որպես *ինտերտեքստ* ներգրավված առանձին *այլուզիաներ*՝ «Բայց երևակայե՛ թէ ո՛րպիսի սրտմտութեամբ գրաւուեցայ երբ հոս գալով

գտայ զինքը նոյն Ամատունի հայ գորավարին թելերուն մէջ, որ առաւել ծանօթ է իւր յաղթանակական սիրոյ աշխարհին մէջ, քան թէ պատերազմի դաշտին վրայ», «Լատիներէն տառերով գրուած արձանագրութիւն մի մանաւանդ մեր հետաքրքրութիւնը շարժեց, երբ կանանց մեծատարած վերնատան աջակողմեայ մէկ անկիւնը, գետինը մարմարիոնի վրայ, **Վէնետիկի Հէնրիկոս Տանտալոյ Տոժին** անունը կարդացինք: Այս **Տոժը Կոստանդնուպոլիս եկած էր 13րդ դարուն**, ըստ ինդրանաց **Ալեքսի Անժի**, որոյ հայրը՝ **Իսահակ Անժ**, գահընկեց եղած էր իւր եղբորմէն, և բռնուելով բանտարկուած էր», «Կ'ըստի թէ Սալամինայի ծովային պատերազմէն վերջը, **Թէմիստոկլէս նուիրած է այդ սիւնը Ապոլոնին**, եւ գետեղած անոր հոշակաւոր տաճարին մէջ որ ի Դեղբիս» [9, 164, 178-179]: Մի տեքստի մէջ այլ տեքստերի առկայության խնդիրը արեւմտյան տեսաբանները քննել և քննում են տարբեր՝ լեզվաբանական, հաղորդակցական, գրական և այլ տեսանկյուններով՝ միմյանց նկատմամբ տեքստերի փոխազդեցությունը սահմանելով որպէս *միջտեքստայնություն* [5, 8-10]:

Գրական երկի թեման նյութականանում է և դառնում է նշանների համակարգ, այսինքն՝ կանացի լեզուն իր խոսքային պատկերը վերստեղծում է ոչ թէ առարկայի տեսանելիությամբ, այլ նրա հետ ունեցած իմաստային և հուզական-գգայական կապերով: Տյուսաբի «Մայտա» և «Արաքսիա կամ վարժուհի» վեպերի նյութականացումը ապահովվում է տեքստային տարբեր տարրերի և գործիքների միջոցով: Դրանք գեղարվեստական պատկերին հաղորդում են գեղագիտական ամբողջականություն և նշանակություն: Այդօրինակ հատկանիշները անհրաժեշտ են իրականում գոյություն ունեցող կերպարների և սյուժեների պատկերավորումների համար: Տյուսաբի արձակի լեզվական հնարավորությունների իրացման գործառույթը ստանձնում են նաև *տրոպները*<sup>3</sup> կամ լեզվական պատկերավորման գեղարվեստական այլ միջոցները, որոնք օգնում են գեղարվեստական երկի արտահայտչականության հասանելի դառնալուն: Դրանք չափազանց ինքնուրույն են գեղարվեստական երկերում և, որպէս ամբողջություն, տեղորոշվում են համընդհանուր գեղագիտական գործիքակազմի և առանձին տարրերի գործառույթային հիմնավորումներով, ոճական շերտավորումներով, պատկերների իմաստներով և խորություններով:

Արտահայտչականության լեզվական տիրույթը հատկանշելով՝ *տրոպները* մշտապէս փոխառնչվում են ձևին և բովանդակությանը: Վերլուծության

---

<sup>3</sup> Ժամանակակից լեզվաբանության մէջ *տրոպները* ներառում են փոխաբերությունը, մետոնիմիան, համեմատությունը, մակդիրը, հեզնանքը, հիպերբոլան, սինեկդոխը, օքսիմորոնը, լիտոտան: Բանաստեղծական տրոպները ներառում են նաև անձնավորումը, խորհրդանիշը և այլաբանությունը, ալիտերացիան, պարոնումազիան, պարաֆրազը ևն:

տվյալները թույլ են տալիս հիմնավորել, թե Տյուսաբի վեպերը ներառում են նաև *տրոպյների* համակարգը: Հմմտ.՝ «Արեգակն իբր հսկայ բոցավառ, ջրոց մեջ կ'իջնար հանգչելու համար, և ծովն թուևր իբր ոսկեփայլ մեծատարած անկողին, յարդարուած ի պետս ցերեկուան իշխանին, որ հետզհետև ամփոփուելով իւր փայլուն մեծութեան մեջ, ննջեց յետոյ ջրոցն ի գոգ, ինքզինքը ծածկելով» [10, 73], «Յուսահատութիւնը առջեւ կը կանգնի իբր անզթութեան կմախքը, և անազորոյն խնդութեամբ կը ներկայէ պատկեր մի գոր կը յափշտակէ, երբ հոգեւին կը բաղձամ անոր մօտենալ» [9, 202]:

Նշանակալից արտահայտչական միջոցներ են ներդրված նաև **ածականներով, դերանուններով և մակդիրներով** արտահայտված փոխաբերություններում՝ գերադրական աստիճանով: Կին հեղինակների արձակում *էշտիվն* ամենաարտահայտիչն է: Հմմտ՝ «Լուսինն երեւցաւ երկիւղալից, **մերթ թերեւ և մերթ թանձր** ամպերէ քողարկուած, իբր թէ ապահովուելու համար թէ զինքը նսեմացնող իշխանն ոչ ևս յերկինս կը տիրապետեր, և թէ ազատ էր ինքն եւս **զերթ** աստեղաց թագուհի, արշաւել երկնից գիշերամաց անջրպետաց մեջ», «-Տէ ս, ըսաւ Արաքսիա, **որչափ** յոյսերուդ կատարման մերձենաս, **նոյնչափ** անհամբերութիւնդ կը սաստկանայ» [10, 73, 114], «Երբ նշմարեց ակնածական ընթացքս քեզ նկատմամբ, **իբրեւ** առիւծ մոնչեց, զի նախանձը կը մաշեցնէ զինքը», «Յուլիանէս ճակտին վրայ կը կրէր տասն ու վեց գարնանց անմեղութիւնն ու սէրը, նոյն օրէն ի վեր **իբրեւ** դրախտի թռչուն կ'ոստոստէ երջանկութեան ճիւղերուն վրայ...» [9, 68, 71]:

Տյուսաբի «Մայտա» և «Արաքսիա կամ Վարժուհի» վեպերում ուշագրավ են նաև **համեմատությունները, փոխաբերությունները, մակդիրները**, որոնք ընթերցողին են փոխանցում կերպարների կամ հեղինակ-պատմողի զգայական և հուզական ներքին ազդակները՝ հստակ վերաբերմունք ստեղծելով որևէ կերպարի, օբյեկտի կամ երևույթի վերաբերյալ: *Համեմատությունները, փոխաբերությունները և մակդիրները* նույնպես կանանց դիսկուրսի կարևոր գեղարվեստական միջոցներ են: Տյուսաբի և Սիպիլի վեպերում առկա են մեծ թվով համեմատություններ, փոխաբերություններ և մակդիրներ: Հմմտ.՝ «Մյսպիսի՛ գիշեր մի պանիր հա՛ց ուտելու համար, աղջիկս,- գոչեց մայրը դառնութեամբ, մինչ աչերն տարօրինակ կերպի կը փայլէին, և **այտերն կարմիր էին իբր զհուր**», «-Դո՛ւ, սիրելի՛ս, պատասխանեց Արաքսիա, **դրական էակ չես, դու բանաստեղծ ես, համայն սէր ես, անձնուիրութիւն և վսեմ երագ:** Հո՛ն թիւերը ու հաշիւը գործ չունին» [10, 13], «Յուլիանէս որ թարմ գեղեցկութեամբն ու բարեբաստութեամբը կը փայլի, բարեկամութիւն հաստատեց հիւժեալ պատանուոյ մի հետ գոր կարծես թէ **մահն իբրեւ հարսն** ընտրած է անձին», «...Մինչ ծաղիկներ կ'որոնէի տեսայ յանկարծ փոս մի որ կը բացուէր ոտիցս ներքեւ, նայեցայ անդ, տեսայ **մահը**, որ **կը ծայտեր ինձ**» [9, 74]:



## Օբսիմորն [7]

Մբբուհի Տյուսաբի «Մայտա» և «Արաքսիա կամ Վարժուհի» վեպերում լայնորեն կիրառվող *տրոպյների* շարքում առկա է նաև *օբսիմորնը*: Այն իմաստով հակադիր սահմանումների և հասկացությունների համակցություն է, որի կիրառության արդյունքում ստեղծվում են իմաստային նոր որակներ (երջանիկ դժբախտ սեր, ինքնավստահության մեջ միամիտ, լիակատար մենակություն՝ լիակատար երջանկությամբ, խելացի հիմար, քաղաքավարի զգվանք): Տյուսաբի նշյալ վեպերում *օբսիմորնը դիտարկվում է որպես լեզվական խաղ*: Հմմտ. «Դժբադրությունը ծերացուց զիս արդեն, զի *դժբադրությունը ծանր դպրոց մ'է*, ուր ժամանակ չկայ երագելու, և ուր *իրականութեան դասը կը տրուի* միայն: Հո՛ն *կեանքը կը ներակայանայ մեզ գուրկ իւր բոլոր զարդերէն սուկալի մերկութեամբ կմախքի կերպարանաց ներքէ*: Այդ *կմախքին երկբայութեան տեղի չտար*, զի մեր աչաց առջեւ կը պարզէ իւր ծալքերը, խռռչները ու սեւութիւնները: Հո՛ն աչքը կը վարժի այդ խիստ ու դժնդակ տեսարանին, *հոգին կ'արիանայ*, և իբր քաջ զինուոր կենաց ճակատամարտին մէջ կը յառաջանայ» [10, 28], «*Կեանքս ճերմակ էջ մ'է*, որ ո՛չ մի սիրտ անունը գծեց, այլ մահը միայն իւր սեւ դրոշմը դրաւ անդ: ...Ես ալ երիտասարդ եմ, ես ալ գիտէի սիրել, գիտէի ժպտիլ երկնիս եւ ծաղկանց: Եկայ, տխուր վկայ մի հանդիսացայ կենաց վայելից, և առանց մասնակցելու անոր, *վշտերս ուսիս վրայ բեռնաւորած՝ մահուան մութ կայանը կ'իջնամ տրտմայոյզ*» [9, 79]:

Տյուսաբի սույն երկերում օգտագործվում է նաև *հակաթեզի* [7, 18] տեխնիկան: Այն ուժեղացնում է *խոսքի հուզական երանգավորումը*, ընդգծում է դրա օգնությամբ արտահայտված միտքը, և դրա *հակաթեզը* օգտագործվում է որպես լեզվական խաղի տեսակներից մեկը: Հմմտ. «Կամ *միատեղ փրկուէինք* և կամ *միատեղ մեռնինք*: Ահաւոր էր սիրոյ դաշնադրութիւնը *մահուան մէջ*», «Կեանքն ինչպէս աներակը լուսոյ ազդեցութեան կ'ենթարկուին, առաջինն առաւել *կը գեղեցկանայ կենսական հանգամանօքն*, իսկ միւսն առաւել խորհրդաւոր վսեմութեամբ *կը տարածուի իւր մահուան մէջ*» [10, 75, 119], «*Աղքատութիւնն ու տգիտութիւնը մահացու ախտեր են*, որ մարդկութիւնը կը մաշեցնեն, իսկ *աշխատութիւնն ու լոյսը* յառաջ կը մղեն զայն՝ *մեծ հանդիսացնելով*» // «Այդ ցնցոտեաց մէջ *աշխատութիւնը մտցնելու է անօթութեան վերջ տալով, այդ խաւարի մէջ լոյս ծաւալելու է...*» [9, 223]:

Որոշ դեպքերում *օբսիմորնի* իրացման արդյունքում ստեղծվում է նաև նոր իմաստ, որը կարող է լինել փոխաբերական և որը կարևոր է կանանց վեպերի սյուժեների իրացման համար՝ «Օո՛վն, որ *վայրագօրէն կը մոնչէր ու փրփուր կը ժայթքէր*, նոյն վայրկյանին *հեզահամբոյր կը մրմնջէր*, նաւուն կողերը փայփայելով, իբր թէ ի նշան զոջման իւր գործած անօրէնութեանց

համար», «Կը մտածէր, թէ տարակուսանաց պատճառ չկար այլևս, անի որ վտանգի ժամանակ նոյն իսկ երիտասարդն խոստացած էր **ապրիլ եւ մեռնիլ** իրեն հետ» [10, 75, 77-78], «Վրէժ մի կ'ուզեմ լուծել, բայց ոչ մահուամբ, որով տանջանքը կը վերջանայ, այլ կեանքով, որպէս զի մէն մի օր նոր թոյն մատռուակէ որոշած գոհիս հոգւոյն, եւ անոր մատունքն յօշոտէ անհնարին ցաւերով», «Կը սիրէ զիս անշուշտ, բայց իւր տկարութիւնը շատ աւելի մեծ է, քան սէրն, և վստահ եմ, որ նոյն ձեւով պիտի վարուէր որ և է կնոջ հետ» [9, 95]:

Հետագոտված վեպերում **հակաթեզի** գործառույթը կերպարների վարքագծին լրացուցիչ հուզական երանգավորում տալն է: Տյուսաբի արձակի բնորոշ գծերից է նաև **բացականչական** և **հարցական** նախադասությունների օգտագործումը:

Ուսումնասիրվող երկերում **հարցական, հրամայական, բացականչական, պայմանական նախադասությունները, կոչականները, ուրիշի ուղղակի խոսքը** գործածվել են հեղինակային հաղորդագրությունների հուզական ազդեցությունը մեծացնելու նպատակով: Հմմտ.՝ «**Մա՛յր**, բաւ է ինձ, որ դուք առողջ լինիք և լաւագոյն Բարեկենդան չեմ խնդրեր, քսան տարի ապրած եմ տակավին, կեանքն ինձ համար է, ժամանակ ունիմ վայելելու զայն: Բայց **դո՛ւք, հա՛յր ի՛մ**, դո՛ւք պէտք ունիք կենաց վայելմանց», «**Հայրի՛կ**, փոյթ չէ եթէ մենք ևս նման մեծափարթամ սեղանն չունինք այսօր, բաւ է, որ ողջ լինինք և ամեն ինչ լաւ է ու գոհացուցիչ: Բայց **վստա՛հ եղի՛ր**, որ հետեւեալ տարին, **եթէ ապրիմ**, լաւագոյն Բարեկենդանի գիշեր մի կ'անցնես» [10, 13, 22], «**Բ՞նչպէս** մետաղը մարգարէական ոգի կրնայ ունենալ ապագայ աղէտք մի յայտնելու համար՝ և կամ **ի՞նչ** զարմանալի ազդեցութիւն՝ դէպքեր պատրաստելու և անոնց ուղղութիւն տալու» // «Քեզ վերադառնալով, **Մայտա՛**, զուցէ առարկես թէ ըրած կորուստդ այլ և այլ կասկածանաց զքեզ ենթարկէ գտնուած վիճակիդ մէջ...» [9, 89]:

Տյուսաբի վեպերը առանձնանում են նաև շարահյուսական արտահայտիչ և գործուն կառույցների կիրառություններով: Որպէս **հոնտորական հարց** լեզվաբանության մեջ այն սահմանվում է կամ որպէս **ոճական կերպավորում**, որի էությունը այն է, թէ հարցը չի տրվում պատասխան ստանալու, այլ միայն՝ ընթերցողի կամ ունկնդրի ուշադրությունը այս կամ այն երևույթի վրա հրավիրելու համար, կամ երևութանում է որպէս **գաղտնագրված հաստատում** կամ **ժխտում**, որը բնութագրվում է տարբեր **հուզարտահայտչական** երանգներով և ենթադրում հնարավոր պատասխան:

Հոնտորական հարցերի հուզարտահայտչական հնարավորությունները, հաղորդագրության հիմնական գաղափարը ընդգծելու ունակությունները, որոնք բացահայտվում են վերլուծված երկխոսությունների տարբերակներում՝ դրանց լայն տարածումով: Հոնտորական հարցերը Տյուսաբի արձակում

հաճախ գործածվում են որպես խոսքի ավարտը ընդգծելու առավել արտահայտիչ ձև: Այդ հարցերը ընդգծվում են նաև իրենց պատասխանների միջոցով: Նման դեպքերում դրանք դառնում են գործողության կամ ցանկացած հարցի արագ լուծում՝ «–Ո՛հ, գոչեց Վարդանոյշ, **ի՛նչու գանձեր չունիմ վրադ թափելու համար, Արաքսիա՛**» [10, 15], «**Ի՛նչ է կեանքն առանց քեզ եթէ ոչ ցամքած ովկիան մ՛որ կաթիլ մի ջուր չունի անգամ**» [9, 217]: Տյուսաբի վեպերում սեռային (իգակա՛ն, թե՛ արական) հարցադրման վերագրումը հնարավոր է իրականացնել նաև շարահյուսական հատկանիշների հիման վրա: Հեղինակի վեպերի լեզվի շարահյուսական քննությամբ ընդգծվում է հանգամանքը, թե կանայք նախընտրում են պատմողի դերը: Պատմողական նախադասությունների միջոցով հստակորեն ընդգծվում են կին կերպարների էությունները՝ մի կողմից ուժը, վճռականությունը, հաստատականությունը, մյուս կողմից՝ թուլությունը, ենթարկվելը, կասկածները, անորոշությունը:

### **Էլիպսիսը որպես պատկերավորման միջոց**

Տյուսաբի արձակում լեզվի միջոցով կերպարների հուզական վիճակը՝ հուզմունք, ուրախություն, զարմանք, հրճվանք, տխրություն, մելամաղձություն են, արտահայտելու հիմնական միջոցներից մեկը **էլիպսիս** է [8, 43]: Այս դեպքում՝ կառուցվածքային ավարտունությունը դրսևորվում է տեքստի իմաստաբանական և ձևաբանական կառուցվածքային միավորների կորստով, օրինակ՝ **օժանդակ բայի**՝ «Բնութիւնն ուրախ լինի, թէ տխուր, այն կը փայլի անկասկած, նոյնչափ՝ կենաց, որչափ՝ աւերակաց վրայ» [10, 119], «Ուստի, այս գործատունը երկու նպատակի կրնայ ծառայել, մին՝ **աղքատութիւնը սփռփել** գործելու սերն ազդելով, և միւսը՝ ծուլութեան պատճառները վերջացնել» [9, 180]:

Էլիպսիսի դրսևորման այսօրինակ գործընթացը կարող է ազդել տեքստի ամբողջական բառապաշարի արժեքային բաղկացուցիչների վրա, ինչպիսիք են՝ **շարժում** արտահայտող բայերը: Հոգեկեզվաբանության տեսանկյունից **էլիպսիսը** [7, 465-466] դիտվում է որպես հույզերի անուղղակի արտահայտություն՝ «Նոյն պահուն Միսակ հագիւ քսան եւ վեց տարեկան էր, թուխ էր, ազդու և համակրական դեմք մը ուներ, **աչերը՝ հրավառ, զծագրութիւնը՝ կանոնաւոր, հասակը՝ բարձր և վայելուչ**» [10, 86], «Սակայն ծածկեցի Կոմսէն մեր Ազգին մեղադրելի անտարբերութիւնն այնպիսի սրբավայրի մի նկատմամբ, ուր **ալեւորը՝ հովանի, հիւանդը՝ բոյժ**, որբը՝ գթութիւն կը գտնայ» [9, 180]:

Էլիպսիսային արտահայտությունների շրջանակը առավել լայն է, քանի որ դրանք ներառում են արտահայտություններ և առանձին բառեր, որոնք ընդգծում են խոսքի տեղաշարժերը: Էլիպսիսը նաև իմաստային և հնչյունական իրացումների միջև ընկած անհամապատասխանությունն է: Հետևաբար, չնայած նախադասության կամ համապատասխան բառապաշարային միա-

վորի փաստացի բացակայությանը, էլիպսիսային կառույցներն ունեն հստակ մեկնաբանություն և հաճախ սահմանված են խստորեն: Այս առումով, քննարկումներ առկա են բացակայող (զեդչվող) միավորի փոխարեն առաջարկվող շարահյուսական կառույցի շուրջ [11, 572]: Մա նույնպես ճանապարհ է բառապաշարի լեզվաոճային շերտավորումների միջոցով հասնելու ուսումնասիրության ընթացքում առաջադրված նպատակներին:

Հեղինակի վեպերում էլիպսիսային նախադասությունները իրացվում են նպատակամիտված արտահայտությունների և ձևակերպումների տեսքով, թեև նախորդող թերի արտահայտություններին մշտապես կցվում են հստակեցնող պարզաբանումներ՝ ռոմանտիկական տպավորությունը ավելացնելու, ընդլայնելու և հստակեցնելու նպատակով, ուստի՝ դրանց արտահայտչականությունը և ազդեցությունը հիմնված են որոշակի մասնիկների տրամաբանական ընտրության և փաստերի իրադարձականության վրա: Մեր դիտարկած օրինակները ցույց են տալիս նաև, որ Տյուսաբի վեպերի լեզվաոճային շերտավորումների միջոցով հնարավոր է քննել նաև *կանացիություն* ֆենոմենը՝ բացահայտելով դրա առանձնահատկությունների տարաբնույթ մակարդակները:

### **Եզրակացություն**

Տյուսաբի երկերում երկու սեռերը ընդգծող տարբերությունները ներառում են նաև գերիշխող այնպիսի հասկացություններ, որոնք բնորոշ են կոնկրետ հեղինակին կամ, ընդհանրապես, կանացի արձակյին: Ուսումնասիրության այս ձևը հիմնված է կանացի արձակյի արտալեզվական չափանիշների վրա:

Մրբուհի Տյուսաբի արձակում գոյություն ունեն գերիշխող թեմատիկ հասկացությունների որոշակի շարքեր՝ *սեք, ընտանիք, երջանկություն, աշխատանք, կանացի ճակատագիր* ևն, որոնք էականորեն տարբերվում են իրենց մշակութաբանական հենքով:

Լեզվամշակութաբանության տեսանկյունից արևմտահայ կանանց արձակի ուսումնասիրությունը և, մասնավորապես, նրանց երկերում ձևավորված ըմբռնումների ուսումնասիրությունը, դրանց նույնականացումը, բովանդակությունը, լեզվական, պարալեզվական և արտալեզվական գործոնների սահմանումները, որոնք ազդում են բառապաշարի ընտրության վրա, չափազանց կարևոր և տեղին են, քանի որ հայ կին հեղինակների կողմից ստեղծվող արձակը զարգանում է, հետևաբար և՛ ներկայացնում է *աշխարհ-պատկերի* որոշակի ընկալումները:

### Գրականություն

1. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու, Ձևաբանություն, Երևան, ԵՊՀ հրատ, 2004, 432 էջ:
2. Барт Р., Избранные работы: Семиотика. Поэтика, Москва, 1994, изд: Прогресс, 678 с.
3. Գրականության տեսության արդի խնդիրներ. միջտեքստայնություն: Ուսումնական ձեռնարկ. Երևան, ԵՊՀ հրատ., 2016, 330 էջ:
4. Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ, 1979, 487 էջ:
5. Landow George P., Other Convergences: Intertextuality, Multivocality, and De-centeredness, the Johns Hopkins University Press, 1992, pp. 8-10.
6. Խլղաթյան Ֆ., Ժամանակակից հայոց լեզու, մաս Ա, Երևան, Չանգակ-97, 2009, 294 էջ:
7. Словарь литературоведческих терминов:/ Ред.-сост.: Л. И. Тимофеев и С. В. Тураев. М.: «Просвещение», 1974, 509 с.
8. Merchant Jason, Ellipsis. Syntax: ed. by Tibor Kiss and Artemis Alexiadou, Berlin: Walter de Gruyter. Jason Merchant University of Chicago, 2012, 43 p.
9. Տյուսաբ Ս., Արաքսիա կամ վարժուհի, Կ. Պոլիս, 1887, տպ. Նշան Կ Պէրպլեւեան, 408 էջ:
10. Տյուսաբ Ս., Մայտա, Կ. Պոլիս, 1883, տպ. Չարդարեան, 249 էջ:
11. Williams Edwin, Robert Fiengo, Robert May, Indices and Identity: Language. 1995, T. 71, vol. 3, 572 p.

## Лингвостилистические пласты в романах Србуи Тюсаб «Майта» и «Араксия, или Учительница»

*Наира Амбарцумян  
Сирануш Парсаданян*

### Резюме

**Ключевые слова:** *Србуи Тюсаб, «Майта», «Араксия, или Учительница», женский дискурс, тропы, интертекст, эллипс, оксюморон*

В исследовании мы проанализировали языковые и стилистические пласты, их особенности и взаимопроникновения в романах западноармянской писательницы Србуи Тюсаб «Майта» и «Араксия, или Учительница». Цель исследования – выявить лингвостилистические пласты в романах Србуи Тюсаб «Майта» и «Араксия, или Учительница» в качестве *техники женского письма* на основе изучения языковых особенностей женской прозы западноармянских авторов второй половины XIX века. Задача исследования состоит в том, чтобы по-новому интерпретировать литературную технику и инструментарий (сравнения, аллегории, метафоры, оксюморон, эллипсис, морфологические и синтаксические приемы и т.д.) в художественных произведениях западноармянских писательниц второй половины XIX века. В романах западноармянской писательницы второй половины XIX века Србуи Тюсаб ярко подчеркнуты женско-мужские мировосприятия и мирообразы.

Исследование является междисциплинарным. Материал проанализирован в контексте взаимосвязей и взаимоотношений между лингвистикой и литературоведением. Нами были применены сравнительно-сопоставительный, лингвистический и литературно-антропологические методы, которые использовались по принципу зонта: в каждом радиусе мы наблюдали языковые пласты, идентифицирующие женственность, в упомянутых романах Србуи Тюсаб. Подобное исследование проводится впервые и поэтому является беспрецедентным. Оно приобретает важность и актуальность не только с точки зрения междисциплинарности, но и в контексте анализа «женского вопроса» в арменоведении. Для сохранения оригинальности статьи, мы использовали первоисточники романов Србуи Тюсаб, а не репринтные издания.

## Linguostylistic Stratifications in the Novels “Mayta” and “Araksia, or the Governess” by Srбуhi Tyusab

*Naira Hambardzumyan*  
*Siranush Parsadanyan*

### Summary

**Key words:** *Srбуhi Tyusab, “Mayta”, “Araksia, or the Governess”, feminine discourse, trope, intertext, ellipsis, oxymoron*

This article is an attempt to examine the linguistic and stylistic stratifications, their features, and interpenetrations in the novels “Mayta” and “Araksia, or the Governess” by the Western Armenian writer Srбуhi Tyusab. The *aim* of the study is to identify the linguostylistic stratifications in the novels of Srбуhi Tyusab “Maita” and “Araksia, or the Governess” as a *female writing technique*, based on the study of the linguistic features of the prose of Western Armenian female authors of the second half of the 19<sup>th</sup> century. The *problem* of the study is to newly interpret the literary techniques and tools (comparisons, allegories, metaphors, oxymoron, ellipsis, morphological and syntactic tricks, etc.) used in the fiction works of Western Armenian women authors of the second half of the 19<sup>th</sup> century. In the novels of Srбуhi Tyusab, the female-male worldview and world-images are clearly emphasized.

The material was analyzed in the context of the reciprocal connections and relationships between linguistics and literary studies. We used the method of comparative, linguistic, and literary anthropology, which we applied by the principle of umbrella: observing the linguistic stratifications of the mentioned novels of Srбуhi Tyusab as an *identification of femininity*, in one radius. The research is unprecedented as this kind of study has been done for the first time. It acquires its importance and relevance not only in terms of interdisciplinarity, but also in the context of the analysis of «women’s problems» in Armenology. In order to be faithful to the originality of the article, we used the originals of Tyusab’s novels and not the reprints.

Ներկայացվել է 23.01.2023 թ.

Գրախոսվել է 09.03.2023 թ.

Ընդունվել է տպագրության 25.05.2023 թ.